



«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail:
info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

22.07.2019թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
Պարոն Համբարձում Մաթևոսյանին

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80

Լրացուցիչ հարցում

Հարգելի պարոն *Մաթևոսյան*,

«Հետք» էլեկտրոնային թերթը դեռևս 12.07.2019թ. հարցում է ուղարկել Ձեզ: Պատասխանը ստացվել է թերթի, ոչ հստակ և խուսափողական ձևակերպումներով: Մասնավորապես՝ խնդրել էին տեղեկացնել՝

- 1. Մարզպետարանի քանի՞ աշխատակից Արմավիրի մարզի բնակիչ չէ, ովքե՞ր են նրանք:**
- 2. Մարզի բնակիչ չհանդիսացող աշխատակիցները ո՞ր բնակավայրերից են գալիս աշխատանքի:**

Ձեր կողմից տրված պատասխանում նշված է, թե մարզպետարանը չի տիրապետում այդ տեղեկատվությանը: Պատասխանը չի արտացոլում իրականությունը, քանի որ առնվազն մարզպետ Համբարձում Մաթևոսյանը, գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վարդան Վարազդասյանը և այլք, մարզի բնակիչ չեն, հետևաբար մարզպետարանը չէր կարող չիմանալ այդ տեղեկատվությունը: Ինչ վերաբերում է, որ բնակավայրի անվանման նշումով խախտվում է մարդու անձնական կյանքի գաղտնիության իրավունքը, ապա այս պատասխանը ևս տրամաբանական չէ: Մասնավորապես՝ 12.07.2019թ. հարցման մեջ նշված նույն հարցերն ուղարկվել են նաև ՀՀ բոլոր մարզպետարաններին: Վերջիններս տրամադրել են մարզի բնակիչ չհանդիսացող աշխատակիցների վերաբերյալ տեղեկատվություն, քանի որ բնակավայրի անուն նշելը չի կարող նույնանալ անձի բնակության հասցեի հետ և օրինակ, Երևան, Աբովյան, Վարդենիս և այդ բնակավայրերի անունների նշումով չի կարող խախտվել անձնական կյանքի գաղտնիության իրավունքը: Այս տեղեկատվության տրամադրումը ողջամտորեն չի կարող համարվել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված սահմանափակում:

Նշված տեղեկատվության չտրամադրումով մարզպետարանը խախտել է դիմողի տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Հարցրել էինք նաև՝

3. Ինչպե՞ս է կազմակերպվում մարզի բնակիչ չհանդիսացող աշխատակիցների փոխադրումը տնից աշխատավայր և հակառակ ուղղությամբ: Եթե տրվում են փոխհատուցումներ ապա, ում է տրամադրվում և ինչ չափով, ինչի հիման վրա: Տրամադրել փոխհատուցում ստացողների ցուցակը ամսական կտրվածքով՝ գումարի չափով:

Մստացված պատասխանով անդրադարձ չի կատարվել այս հարցին և տեղեկատվություն չի տրամադրվել, ինչը խախտում է տեղեկատվություն հայցողի սահմանադրական իրավունքը:

Խնդրել էինք տրամադրել տեղեկատվություն նաև հետևյալի մասին.

4. Մարզպետարանի քանի՞ աշխատակից է օգտվում ծառայողական ավտոմեքենաներից տնից աշխատավայր և հակառակ ուղղությամբ երթևեկելու համար: Ովքե՞ր են այդ աշխատակիցները: Տրամադրել նշված անձանց ցուցակը և ավտոմեքենաների վերաբերյալ տեղեկատվություն:

Այս հարցի պատասխանը տրվել է մասնակի: Նշվել է միայն ծառայողական ավտոմեքենաներից օգտվող անձանց վերաբերյալ տեղեկատվություն, իսկ թե քանի աշխատակից է օգտվում ծառայողական ավտոմեքենաներից տնից աշխատավայր և հակառակ ուղղությամբ երթևեկելու համար, ովքե՞ր են այդ աշխատակիցները, մարզպետարանը խուսափել է պատասխանել՝ խախտելով «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի տեղեկատվություն հավաքելու, ստանալու, տարածելու սահմանադրական իրավունքը:

Հարցրել էինք նաև, թե

5. 4-րդ կետում նշված անձանց տնից աշխատավայր և հակառակ ուղղությամբ տեղափոխելու համար ամսական կտրվածքով որքա՞ն գումար է հատկացվում, ի՞նչ միջոցներից: Գումարի չափը նշել ըստ աշխատակցի:

Այս հարցին ևս ամբողջական պատասխան չի տրվել: Նշվել է միայն ծառայողական չորս ավտոմեքենաների սպասարկման համար հատկացվող բենզինի սահմանաչափը և հստակ չէ, թե օրինակ փաստացի որքան բենզին է ծախսվել յուրաքանչյուր ծառայողական ավտոմեքենայի սպասարկման համար:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերը սահմանում են, որ տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով «ապահովել տեղեկությունների մատչելիությունը և հրապարակայնությունը», «տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն»: Հինք ընդունելով վերոգրյալը, խնդրում եմ տրամադրել ամբողջական և հավաստի տեղեկություններ հետևյալի մասին:

- 1. Մարզպետարանի քանի՞ աշխատակից Արմավիրի մարզի բնակիչ չէ, ովքե՞ր են նրանք:**
- 2. Մարզի բնակիչ չհանդիսացող աշխատակիցները ո՞ր բնակավայրերից են գալիս աշխատանքի:**
- 3. Ինչպե՞ս է կազմակերպվում մարզի բնակիչ չհանդիսացող աշխատակիցների փոխադրումը տնից աշխատավայր և հակառակ ուղղությամբ: Եթե տրվում են փոխհատուցումներ ապա, ում է տրամադրվում և ինչ չափով, ինչի հիման վրա:**

Տրամադրել փոխհատուցում ստացողների ցուցակը ամսական կտրվածքով՝ գումարի չափով:

4. Մարզպետարանի քանի՞ աշխատակից է օգտվում ծառայողական ավտոմեքենաներից տնից աշխատավայր և հակառակ ուղղությամբ երթևեկելու համար: Ովքե՞ր են այդ աշխատակիցները: Տրամադրել նշված անձանց ցուցակը և ավտոմեքենաների վերաբերյալ տեղեկատվություն:
5. 4-րդ կետում նշված անձանց տնից աշխատավայր և հակառակ ուղղությամբ տեղափոխելու համար ամսական կտրվածքով որքա՞ն գումար է հատկացվում, ի՞նչ միջոցներից: Գումարի չափը նշել ըստ աշխատակցի, ավտոմեքենայի բենզինի փաստացի քանակի՝ առնվազն եռամսյա կտրվածքով:

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գ. Բալասանյան

